

ԷԴՈՒԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՄԵԾ ԵՂԵՌՆ՝ ՍԵՎ ԷԶ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Աստվածաշնչյան Դրախտով, Նոյան տապանով, Աստծո սեղանով և Հավիտե-
նական Ուխտով խորհրդապաշտված Արարատի լեռներում՝ Հայոց բնօրրանում
հազարամյակների խորքից եկող հայ ազգը, հայտնվելով պատմության փոթորկա-
լից ալիքների վրա, Առաքելական քարոզությամբ (Ա դար), Ավետարանի հոգիըն-
կալումով ասած, առավ փրկության սաղավարտն ու Հոգու սուսերը, որ է Աստծու
խոսքը¹, և առաջինը աշխարհում քրիստոնեությունը հռչակեց պետական կրոն (301
թ.), որպես հոգևոր փրկության վահան:

Քրիստոնեությունը հայ ազգի համար եղավ Աստծու սպառազինությունը, որով
նա կարողանալու էր ընդդիմանալ սատանայի հնարանքներին, որովհետև, Ավե-
տարանի խոսքով ասած, մեր պատերազմը մարմնի և արյան հետ չէ, այլ՝ իշխանու-
թյունների հետ, պետությունների հետ, այս խավար աշխարհի տիրակալների հետ և
երկնքի տակ եղող չար ոգիների հետ²:

Սատանայի հնարանքների և չար ոգիների մարմնավորումն էին այն բռնակալ
տերությունները և նրանց սպասավորները, որոնք դարերի ընթացքում խոշտանգում
և հյուծում էին հայ ժողովրդին: Հարվածը հարվածի ետևից ուղղվում էր հայոց
կենսական ուժերի և քրիստոնեական հավատքի պահապան Հայ Առաքելական
Եկեղեցու դեմ: Այդ սկսվեց հինգերորդ դարում և որոշ ընդմիջումներով իր
զագաթնակետին հասավ քսաներորդ դարի առաջին տասնամյակներում, երբ
Հայոց հինավուրց պատմության մեջ թուրք ճիվաղների կողմից գրանցվեց Մեծ
եղեռնի սև էջը:

Այն ժամանակներում, երբ Հայաստանում դադարում էր թագավորական
իշխանությունը, և երկիրը ենթարկվում էր օտար տերությունների հարձակումներին
կամ նրանց տիրապետության հաստատմանը, հայ ժողովուրդը աստիճանաբար
գրկվում էր իր հայրենի տարածքներից, ինչը ուղեկցվում էր արտագաղթով,
ինչպես նաև ֆիզիկական ձուլման կամ բնաջնջման սպառնալիքով: Իրականու-
թյունն այն էր, որ ոչ թե հայ ազգն էր ոգով և միասնական կամքով թույլ, այլ դարեր
շարունակ նվաճողները, հաջորդելով մեկը մյուսին, Հայաստանի հանդեպ ավելի ու
ավելի էին սաստկացնում իրենց զավթողական քաղաքականությունը: Եվ չնայած
այն հանգամանքին, որ վերջիններս, միմյանց ոչնչացնելով, իրենց հերթին չքանում
էին պատմության ասպարեզից, այնուամենայնիվ նրանցից յուրաքանչյուրը

¹ Եփես. 2 17:

² Եփես. 2 11:

թեամբ՝ դադարեացեն յիրաքանչիր մոլոր օրինաց... եւ սպաս ունելով կրակի. եւ ի վերայ այսր ամենայնի եւ զմոգութեան օրէնս կատարելով...»⁵:

Արդեն իսկ այս տողերից երևում է, թե ինչպես նվաճողները ֆիզիկապես և հոգեպես ձգտել են ստրկացնել Հայոց աշխարհը: Սուրբ Վարդանաց (450-451) և Վահանյանց ապստամբությունները (481-484) ի չիք դարձրեցին մագդեղական խավարամոլությամբ լցված ուղամուլ Սասանյանների ճիգերը՝ ի կատար ածելու իրենց նվաճողական ձգտումները: Նվարսակի դաշնագրով (484 թ.), համաձայն Ղազար Փարպեցու, Հայաստանում ի թիվս այլ ազատությունների, Սասանյան արքունիքը ստիպված էր ճանաչել «Հաւատոյ քրիստոնէութեան հաստատութիւն», ինչպես նաև համաձայնվել «մոգութեան ատրուշանաց յաշխարհէս Հայոց բարձումն, զեկեղեցւոյ ըստ մեր կամաց զպայծառութիւն եւ պաշտօն...»⁶:

Հայաստանի զորական ուժերի հզորությունը խարխուլելու և դրանով իսկ երկիրը Բյուզանդական կայսրության և Սասանյան Պարսկաստանի՝ ուղամուլական ուժով և հումքով մատակարարող կցորդը դարձնելու նվաճողական ծրագիրն իր արտահայտությունը գտավ Հայաստանի 591 թվականի պարսկա-բյուզանդական երկրորդ բաժանումից հետո բյուզանդական կայսր Մավրիկիոսի (582-602)՝ պարսից արքա Խոսրով Փարվեզին (590-628) գրած նամակից, որը պահպանվել է VII դարի պատմիչ Սեբեոսի երկում. «Յայնմ ժամանակի թագաւորն Յունաց Մաւրիկ հրամայէ գրել առ թագաւորն Պարսից զիր ամբաստանութեան վասն իշխանացն ամենայն Հայաստանեայց եւ զաւրաց իւրեանց: «Ազգ մի խոտոր եւ անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում եւ պղտորեն: Բայց ե՛կ, ասէ, ես զիմս ժողովեմ եւ ի Թրակէ գումարեմ. եւ դու զքոյդ ժողովէ եւ հրամայէ յԱրեւելս տանել: Զի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին. եւ եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն. եւ մեք կեցցուք խաղաղութեամբ: Զի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին՝ մեզ հանգչել ոչ լինի»⁷: Պատմիչը շարունակել է. «Միաբանեցան երկոքին: Եւ սկսաւ կայսրն հրաման տալ, զի ժողովեացեն զամենեսեան եւ ի Թրակէ գումարեացեն. եւ սաստիկ տազնապէր՝ հրաման կատարէր: Եւ սկսան փախչել ի կողմանէն յայնմանէ եւ զալ ի ծառայութիւն Պարսից, մանաւանդ որոց երկիրն ընդ նորա իշխանութեամբ էր: Իսկ նա զամենեսեան ընդունէր»⁸:

Վաղ միջնադարում պարսից և բյուզանդական նվաճողներին ավելացան արաբական ասպատակությունները: Անհրաժեշտ է նշել, որ Բյուզանդական կայսրությունը և Սասանյան Պարսկաստանը Արաբական խալիֆայության հետ ունեցած առաջին իսկ ուղամուլական բախումներում (637 թ.) պարտվեցին, և նույնիսկ Սասանյանների թագավորությունը դադարեց գոյություն ունենալուց (651 թ.), իսկ

⁵ Նույն տեղում, էջ 34, 36:

⁶ Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց: Թուղթ առ Վահան Մամիկոնեան: Երևան, 1982, էջ 414:

⁷ Պատմութիւն Սեբեոսի, աշխատ. Գ. Աբգարյան: Երևան, 1979, էջ 86:

⁸ Նույն տեղում, էջ 87:

նրանց կողմից դարեր շարունակ իր կյանքի քաղաքական, տնտեսական և հոգևոր ոլորտներում հարվածներ կրած հայ ժողովուրդը Հայոց իշխան և զորավար Թեոդորոս Ռշտունու (639-656) ճկուն քաղաքականության շնորհիվ ոչ միայն դիմակայեց խալիֆայության հարձակումներին, այլև նրա մահվանից մի քանի տարի անց ավելի քան երկու տասնամյակների ընթացքում Հայաստանը վերականգնեց իր անկախությունը⁹:

Պետք է նշել, որ այս ժամանակաշրջանում հայ ժողովուրդը ծանր գին էր վճարել իր անկախության համար: Օտար հարձակումների հետևանքով մեծ թվով հայեր գերեվարվել¹⁰ կամ զոհվել էին: Վտանգված էր բնիկ հայ ազգաբնակչության ժողովրդագրական վիճակը: Պատմության մեջ աննախադեպ էր 648 թ. Դվինի ժողովի յոթերորդ կանոնը, որը վկայում էր Հայ Առաքելական Եկեղեցու ազգապահպան նշանակության մասին հայ ժողովրդի պատմական ճակատագրում: Այդ կանոնի համաձայն, այր կամ կին, որի ամուսինը գերության մեջ էր, յոթ տարի համբերելուց և ապաշխարելուց հետո, կարող էր ամուսնանալ¹¹: Եկեղեցական հայրերը անհանգստացած էին հայ ազգաբնակչության թվի կրճատման վտանգով:

Վաղ միջնադարում առավել աղետալի երևույթ էր, ինչպես նաև ապագայի համար տագնապալի նախանշան, ազգային ավազանու մի մասի գլխատումը խալիֆայության պաշտոնյաների կողմից: 703 թ., հայ ժողովրդի հակաարաքական ապստամբությունից որոշ ժամանակ անց, խալիֆայության պաշտոնյաները խաբեությամբ Նախիջևանի և Խրամի եկեղեցիներում փակեցին հայ նախարարներին և դաժան հաշվեհարդար տեսան նրանց հետ: Եղերական մահ ընդունած նախարարների թիվը ութ հարյուր էր, իսկ հրկիզվածների ընդհանուր թիվը, հեծյալների հետ միասին՝ ավելի քան հազար: Աղետի չափերի գիտակցությամբ, Ղևոնդը ցավով նշել է, որ այդ ժամանակ Հայոց աշխարհը, թափուր մնալով նախարարական տոհմերից, գայլերի մեջ մնացած ոչխարների նման եղավ¹²: Այդպիսի դաժանությամբ սկսվեց խալիֆայության տիրապետությունը, որին հայ ժողովուրդը չնայած պատասխանեց մի քանի հուժկու ապստամբություններով, սակայն օտար տիրապետության այդ ժամանակաշրջանից Հայոց պատմության մեջ այնպիսի մի բացասական երևույթ սկսվեց, ինչպիսին խաշնարած ցեղերի վերաբնակեցումն էր Հայկական լեռնաշխարհի կենտրոնական որոշ շրջաններում:

Խալիֆայության նվաճողական քաղաքականության բաղադրամասն էր կազմում իր տիրապետության ամրապնդումը գրավված երկրում: Եթե խալիֆայության տիրապետության սկզբնական շրջանում արաքական խաշնարած ցեղերը միայն ամռանն էին իրենց հոտերով քոչում Հայկական լեռնաշխարհի կենտրոնական

⁹ Դանիելյան Է. Լ., Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ Առաքելական Եկեղեցին (VI-VII դդ.): Երևան, 2000, էջ 207-215:

¹⁰ Charanis P., The Armenians in the Byzantine Empire. Lisboa, 1963, p. 12-16.

¹¹ Կանոնագիրք Հայոց, Բ: Աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի: Երևան, 1971, էջ 200, Օրմանեան

Մ., Ազգապատում, մասն Ա, Կոստանդնուպոլիս: 1913, էջ 712-714:

¹² Պատմություն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց: Ս. Պետերբուրգ, 1887, զլ. Ժ:

հրաբխային սարահարթի մարգագետիններ, որոնք հիանալի արոտավայրեր էին, ապա հետագայում նրանք սկսեցին հաստատվել այդ տեղերում՝ դառնալով խալիֆայության հենակետերը: Փաստորեն, նախկինում Բյուզանդական կայսրության տիրապետության տակ՝ պարսկա-բյուզանդական բաժանումների հետևանքով անցած և կայսերական նվաճողական քաղաքականությամբ և հետագայում արաբական խաշնարած ցեղերի ներխուժելու հետևանքով Արևմտյան Հայաստանի որոշ շրջաններում նույնիսկ խալիֆայության տիրապետության վերացումից հետո՝ Հայ Բագրատունյաց թագավորության ժամանակշրջանում պահպանվեցին արաբական ամիրայություններ¹³, որոնք խիստ բացասաբար ազդեցին Հայոց թագավորության կենտրոնական իշխանության ու արևմտյան և հարավային հայկական իշխանական տների միջև եղած քաղաքական և տնտեսական կապերի վրա: Արդյունքում՝ Բյուզանդիան նվաճեց այնպիսի կարևոր գավառ, ինչպիսին Տարոնն էր, և նահանգներ, ինչպիսին Տայքն էր ու Վասպուրականի թագավորությունը:

Իհարկե օտարի կողմից կատարված յուրաքանչյուր նվաճում, տարածքային կորստի հետ մեկտեղ, նշանակում էր արտագաղթ և էթնիկական պատկերի խաթարում: Բյուզանդական կայսրության անհեռատես նվաճողական քաղաքականությունը, ճանապարհ հարթելով արևելյան վաչկատուն ցեղերի համար, ոչ միայն հսկայական հարված հասցրեց Հայոց ազգային գոյաբանությանը, այլև առաջին իսկ ճակատամարտում (1071 թ., Մանազկերտ) ինքը՝ կայսրությունը խոշոր պարտություն կրեց թուրք-սելջուկներից և վայրէջքի ճանապարհ բռնեց, մինչև 1453 թ. իր վերջնական վախճանը:

Վտանգներով հղի օսմանյան պետությունը ակտիվացրեց իր զավթողական գործողությունները արևելյան ուղղությամբ հատկապես XV դ. վերջին քառորդից, երբ հաղթելով ակ-կոյունլու թուրքմենական վաչկատուն ցեղերին, հրով ու սրով, զանգվածային կոտորածների ու բռնի մահմեդականացման միջոցով բռնազավթեց Հայաստանի մեծ մասը և հետագա դարերի ընթացքում շարունակաբար իրականացրեց իր զավթողական, գիշատիչ քաղաքականությունը:

Անհիմն է այն թեզը, թե հայերը փոքրամասնություն էին կազմում իրենց կողմից բնակեցրած յուրաքանչյուր գավառում¹⁴, քանզի սկզբնաղբյուրների¹⁵ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նույնիսկ «հյուսիսային գավառները, որոնք առավել շատ էին կրել մահմեդական տարրերով բնակեցվելու օսմանյան կառավարության ձեռնարկումների ազդեցությունը, այնուհանդերձ, գերազանցապես հայաբնակ էին, և «տաճիկները» չնչին թիվ էին կազմում»¹⁶:

¹³ Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում: Երևան, 1965:

¹⁴ Palmer A., The Decline and the Fall of the Ottoman Empire, Barnes and Noble Books: New York, 1994, p. 176:

¹⁵ Հակոբ Կարենցի. Շինուած Կարնոյ քաղաքին. - Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., կազմեց Վ. Ա. Հակոբյան, հ. 2: Երևան, 1956, էջ 550-551:

¹⁶ Մելքոնյան Ա.Չ., Ժողովրդագրական գործընթացների միտումները Էրզրումի նահանգում (XVI

կանանց, կուսանաց և երիտասարդաց, աշխարհականաց և զինուորեալ մանկանց, որք կտուեցան չարատանջ մահուամբ և մահատակացն խոշտանգմամբ և դառն տանջանօք և եղին զանձինս ի պաշտպանութիւն հայրենեաց իրեանց և սուրբ կրօնից...»²⁰:

Պատմական փորձը ցույց է տալիս, որ պայմանավորված ներքին և արտաքին հակասությունների և հակամարտությունների աճով կայսրությունները ի վերջո փլուզվում են և բռնակալությունները՝ կործանվում: Թուրքիայի կողմից Մեծ եղեռնի ճանաչումը կթելադրվի պատմական անհրաժեշտությամբ: Ինչպես նշվել է հետազոտողների կողմից, «Թուրքիայի համար անհրաժեշտ է պաշտոնապես ընդունել, որ մա գենոցիդ է կատարել հայ ժողովրդի դեմ, որպեսզի թուրք ժողովուրդը սկսի իր սեփական հոգեբանական ապաքինումը: Թուրքիայի համար մահ անհրաժեշտ է պաշտոնապես ընդունել, որ մա գենոցիդ է կատարել հայ ժողովրդի դեմ, որպեսզի ապաքինում սկսվի երկու հարևան երկրների և նրանց ժողովուրդների միջև»²¹:

Շարունակելով այս միտքը, կարելի է ասել, որ քանի դեռ Թուրքիան չի ընդունել հայ ժողովրդի դեմ գործած գենոցիդի իր հանցանքը և որքանով ուշացնում է այդ անել, այդքանով մա ավելի է խորացնում իր մեղքը գործած հանցագործության համար: Արիստոտելի խոսքով ասած, «Երբ մարդը բաժանված է օրենքից և արդարությունից, մա բոլոր կենդանիներից ամենից վատն է»²²:

Թուրքիան այսօր պատրաստ չի ընդունել, որ հայ ժողովրդի դեմ կատարել է գենոցիդ: Եթե այս խնդրի շուրջ եղած բոլոր ճամարտակումները մի կողմ դնենք, թվում է, թե երկու պատճառ կա, որոնց հաղթահարման համար հանցագործ կողմից դեռևս մեծ ջանքեր կպահանջվեն: Նախ, որպեսզի գործել օրենքով և արդարությամբ, պետք է բարձր գիտակցության հասած հասարակություն ունենալ, ինչը քաղաքակիրթ որակների մակարդակ է պահանջում: Իսկ քաղաքակիրթ երկիր լինելու համար բավարար չէ այլոց աշխարհաքաղաքական շահերից օգտվելով՝ որոշ տեխնոլոգիական և նյութական բարիքներին տիրանալը: Նույնիսկ, հենց այդ շահերով թելադրված հնարավորությունն ստանալ մուտք գործել եվրոպական կառույցներ՝ դեռևս բավարար հիմք չի տալիս խոսելու քաղաքակիրթ հասարակության մասին: Ավելին, կասկածի տակ է դրվում Եվրախորհրդի անդամ-պետությունների՝ քաղաքակրթության արժեքներին հավատարիմ լինելը, եթե նրանք գենոցիդ իրականացրած անցյալով պետությանը իրենց շարքերն են ընդունում:

Երկրորդ պատճառը, թե ինչո՞ւ Թուրքիան չի ընդունում հայ ժողովրդի դեմ գործած գենոցիդը, բխում է նվաճողի ընչաքաղց, թերաթեք հոգեբանությունից: Թուրք ոսոխը, կոտորելով խաղաղ հայ բնակչությանը Հայկական լեռնաշխարհի մեծագույն՝ արևմտյան մասում, նվաճողի բիրտ ուժով տիրացել է անմեղ զոհ

²⁰ Նույն տեղում:

²¹ Problems of Genocide. - Proceedings of the International Conference on "Problems of Genocide", April 21-23, 1995, National Academy of Sciences, Yerevan, p. xii.

²² Aristotle. Politics, I, 2.

դարձած միլիոնավոր հայերի բնօրրանին: Պատմության մեջ դեռևս ոչ մի նվաճող չի խոստովանել իր հանցագործությունը մեկ այլ ժողովրդին կոտորելուց և նրա հողերը նվաճելուց հետո: 1915 թ. Թուրքիայում հավատարմագրված գերմանական դիվանագետների պաշտոնական զեկույցների հիման վրա գրված իր աշխատության մեջ Վ. Միքայելյանը նշել է. «1915 թ. երիտթուրքական կառավարությունը ծրագրեց և իրագործեց արևմտահայության զանգվածային բնաջնջումը. պետական մակարդակով իրականացված այդ վայրագության՝ նոր ժամանակների առաջին ցեղասպանության զոհը դարձան 1.5 միլիոն հայեր: Սակայն թուրք ջարդարարները չբավարարվեցին դրանով: Միջազգային հասարակայնության դատապարտող կարծիքին դեմ-հանդիման թուրքական պաշտոնական շրջանները, նրանց մամուլում հրապարակախոսությունը իրենց եղեռնագործությունը թաքցնելու համար փորձեցին (և այժմ էլ փորձում են) ցեղասպանության մեղքն ու պատճառը բարդել նրա զոհերի՝ հայերի վրա: ... Առաջին աշխարամարտի տարիներին Թուրքիայում ծառայած գերմանական դիվանագետների հաղորդագրությունները վկայում են, որ լիովին սնանկ են թուրքական կողմի միտումները հայերի դեմ ուղղած կեղծ մեղադրանքներով արդարացնելու երիտթուրքական կառավարության իրականացրած Հայոց եղեռնը: Միևնույն ժամանակ նրանց հաղորդումներում նկատելի փաստական նյութ կա հայոց ինքնապաշտպանական կոիվների վերաբերյալ»²³:

Հայոց հարցում պատմական արդարությունը կձևվի պատմական անհրաժեշտությունից, ուստի պատմական հիշողությամբ անհրաժեշտ է պահպանել Հայրենի հողերի սրբությունը: Դեռևս 1918 թ. Ն. Ադոնցը գրել է. «Երբ պահը գա մաքրելու հաշիվները Թուրքիայի հետ և բարձրագլի Հայաստանի անկախության հարցը, միայն պարզ արդարություն կլինի թույլատրել հայերին լինելու իրենց և իրենց երկրի տերը, առանց հաշվի առնելու այն ամենը, որ ձեռք են բերել թուրքերը երկրի էթնիկական բնույթը բռնի կերպով փոխելու գործում»²⁴:

Զորեղ է Հավատը: Հավատով հաղթանակելուց ավելի մեծ հաղթանակ չկա: Եթե չարը թույլ չի տալիս, որպեսզի գործած չարիքը համընդհանուր կերպով ճանաչվի, որին կհաջորդեն ապաշխարական հատուցումը, ուրեմն հոգևոր հաղթանակով կվճռվի պատերազմի ելքը, քանզի «Ամեն ոք, ով հավատում է, թե Հիսուսն է Քրիստոսը, Աստծուց է ծնված. և ամեն ոք, ով սիրում է ծնունդ տվողին, սիրում է նաև նրանից ծնվածին: Սրանով ենք ճանաչում, թե սիրում ենք Աստծու Որդուն, երբ սիրենք և կատարենք նրա պատվիրանները, քանզի այս Աստծու հանդեպ մեր սերը, որ պահենք նրա պատվիրանները: Եվ նրա պատվիրանները ծանր չեն, քանի որ ամեն ոք, որ Աստծուց է ծնված, հաղթում է աշխարհին: Եվ այս

²³ Միքայելյան Վ., Գերմանացի դիվանագետները Հայոց ինքնապաշտպանական մարտերի մասին (1915). - Գերմանիայի Բոխում քաղաքում 1996 թ. հոկտեմբերի 23-25-ը կայացած միջազգային գիտաժողովում ներկայացված զեկույցում: Ազգային Հարցի և Գեոցիդի Ուսումնասիրման Կենտրոն: Երևան, 1997, էջ 8, 30:

²⁴ Ադոնց Ն., Հայկական հարցի լուծման շուրջ: Երևան: 1989, էջ 105:

է այն հաղթությունը, որ հաղթում է աշխահին՝ մեր հավատը: Եվ ո՞վ է, որ հաղթում է աշխարհին, եթե ոչ նա, ով հավատում է, որ Հիսուսն է Աստծու Որդին»²⁵:

Հույսով ապրելով և գործելով կվերամիավորենք և կշենացնենք մեր մախնիների արյամբ սրբազործված Հայոց հողերը, աշխարհասփյուռ որդիները կվերադառնան Հայրենի օջախ: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հովանու տակ, Մեծ եղեռնի սուրբ մահատակների՝ երկնքում ծնված, սակայն երկրի վրա չհայտնված բազմաթյուր սերունդներով, Հայ-Սփյուռքով և պատմական հիշողությամբ կենդանի է Սուրբ Հայրենիքը՝ Բարձր Հայքով և Տայքով, Ծոփքով ու Աղձնիքով, Մոկքով ու Վասպուրականով, Տուրուբերանով ու Նոր Ծիրականով, Կիլիկիայով ու Նախիջևանով, Փայտակարանով ու Ուտիքով: Պատմական Հայաստանի հարության վկան է Արցախյան ազատամարտը, որտեղ զոհված ազատամարտիկները կարող են համարվել սրբեր, քանզի Ս. Գրիգոր Լուսավորչի որդու՝ Վրթանես Կաթողիկոսի կանոնի համաձայն Հայրենիքի ազատության համար կոչում զոհված մահատակները սրբերի շարքն են դասվում, այնպես, ինչպես հռչակվեցին Ս. Վարդանանք:

Աստծո կամքով և զորությամբ Մշո Ս. Կարապետ եկեղեցում Հայոց Սուրբ մահատակների հիշատակին մատուցվող Պատարագը՝ Բարձր Հայքի Թորդանից մինչև Արցախի Ամարաս սփվող եկեղեցիների զանգերի դողանքի ներքո, կազդարարի Հայոց Հոգևոր Հայրենիքի ազատության ավետիսը:



²⁵ Յովհ. Ե 1-5: